ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՐԴԱՐԱՆՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ. ՇԻԱՅԱԿԱՆ ՊԱՏՎԱՐ ԸՆԴԴԵՄ ՀԱԿԱՇԻԱ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ *

ՀՏԴ 94 (479.25); 343.412 *DOI: 10.52063/25792652-2024.1.20-157*

ՍԻՐԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դասախոս, հայցորդ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
vardanyan.s@ysu.am
ORCID: 0009-0006-3004-7733

Հոդվածի նպատակն է ներկայացնել Իրան-Ադրբեջան տեղեկատվական-հոգեբանական պատերազմը և դրանում կիրառված մեթոդները՝ նարդարանյան դեպքերի օրինակով:

Հոդվածում քննարկվում է Նարդարանի կրոնաքաղաքական իրավիճակը, որն աչքի է ընկել հոգևորականության հետապնդումներով, կրոնական բազմաթիվ ծիսակատարությունների անցկացման արգելմամբ, արևմտյան արժեքների ներդրմամբ (եվրատեսիլյան օրինակով), տարբեր ցույցերով, ձերբակալություններով և արյունալի բախումներով: Հոդվածում ներկայացված է այն հակադրությունը, որ Նարդարանը, թեև լինելով Բաքվին այդքան մոտ, միևնույն ժամանակ այդ երկրի ամենակրոնականացված և պահպանողական շիայական կենտրոնն է:

Սույն հոդվածի շրջանակում խնդիր ենք դրել վեր հանելու այն հիմնական արձագանքներն ու տեսակետները, որով հանդես է գալիս իրանական կողմը՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից 2015 թ. Ադրբեջանի Նարդարան ավանի շիա բնակչության նկատմամբ իրականացված բռնաճնշումների վերաբերյալ:

Աշխատանքը շարադրված է գիտական տարաբնույթ ուսումնասիրությունների և մամուլից վերցրած նյութերի հիման վրա՝ վերլուծական, համադրական և պատմանկարագրական մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Ադրբեջանը, իրանական ազդեցությունը դիտարկելով որպես սպառնալիք իր աշխարհիկ բնույթին, իրականացնում է հակաշիայական համալիր գործողություններ, ինչի օրինակներից են նարդարանյան իրադարձությունները: Խնդրո առարկայի շրջանակում իրանական կրոնաքաղաքական ղեկավարությունն իր արձագանքներում ավելի մեղմ ու զգուշավոր է՝ ի հակադրություն Իրանի բարձրաստիճան հոգևորականների, որոնք իրենց դիրքորոշումներում առավել կոշտ են և հռետորաբանությամբ խիստ:

* Հոդվածը ներկայացվել է 21.02.2024թ., գրախոսվել՝ 26.03.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Հիմնաբառեր՝ *նարդարանյան դեպքեր, շիաներ, կրոն, հալածանքներ, իրանական ազդեցություն, բողոք, ցույցեր, քարոզչություն, իրանական արձագանքներ:*

Ներածություն

Անկախության ձեռքբերումից հետո քաղաքական և քաղաքակրթական առումով ընտրություն կատարելով դեպի Թուրքիան, իսկ Իրանի կրոնական ազդեցությունը դիտարկելով որպես սպառնալիք Ադրբեջանի աշխարհիկ բնույթին՝ ադրբեջանական իշխանությունները հիբրիդային տեղեկատվական հակամարտության մեջ մտան Իրանի հետ՝ ջանալով ադրբեջանական հասարակության շրջանում իրանամետ շիայական կրոնական գործիչներին ներկայացնել բացասական լույսի ներքո: Ալիևյան վարչակարգը շիա հոգևորականներին և իրանամետ շիա գործիչներին դիտարկելով այն թիրախային խմբերի շրջանակում, որոնք կարող են Իրանի կողմից օգտագործվել որպես շիայական գաղափարախոսության և, հետևաբար, քաղաքական ազդեցության տարածման գործիք, սկսեց հակաշիայական համալիր գործողությունների իրականացում[1]:

Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ) թեև նորանկախ ադրբեջանական հանրապետությունում իր կրոնակաքաղաքական ազդեցությունը տարածելու նպատակով տարբեր քարոզչական մեթոդներով խրախուսում էր «շիայականության վերածննդի» գաղափարը, սակայն իրանական տեղեկատվական դաշտում ընդունված է համարել, որ վերջին երկու տասնամյակում Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունների որդեգրած հակաշիայական գործողությունները նպաստում են ԻԻՀ-ի կողմից Բաքու-Թեհրան հարաբերությունների վերանայմանը, ինչի արդյունքում Իրանը, Ադրբեջանին ներառելով «շիայական առանցքի» երկրների շարքում և ձևավորելով «շիայական շարժում» *(Լիբանանի «Հիզբալլահի» մեթոդական օրինակով)*, փորձեց Իրանի կրոնական ազդեցությունն անվերապահ ընդունող շիայական ընդդիմադիր շրջանակներին հանել Բաքվի աշխարհիկ վարչակարգի դեմ (**خلجی 2023**):

Շիայական այդպիսի նշանավոր կենտրոններից է աշխարհիկ Բաքվից ոչ շատ հեռու գտնվող Նարդարան ավանը, որտեղ 2015 թ. նոյեմբերին (Islam does not have a significant influence on society in Azerbaijan 2023) պատմության մեջ առաջին անգամ դաժանորեն կանխվեց շիաների համար նշանակալից Աշուրայի[2] ծիսական

---

[1] Ադրբեջանի հակաշիայական գործողություններից է շիաների համար հասարակական վայրերում, դպրոցներում, համալսարաններում գլխաշորի արգելքի կիրառումը և մի շարք շիայական ծիսակարգերի, այդ թվում աղոթականչ (ազան), Աշուրայի սգո արարողակարգի անցկացման իրավունքից զրկելը, ինչպես նաև փակում կամ հիմնահատակ քանդում էին բազմաթիվ շիայական մզկիթներ: Շիայական խմբերը դժվարությունների են հանդիպում նաև լրատվական դաշտում՝ զրկված լինելով հիմնել իրենց սեփական գաղափարական հեռուստաալիքները: (Cornell 42; Azerbaijani government accused Iran of trying to infiltrate the country’s mosques; In his interview with modern.az.., National Assembly deputy Yevda Abramov declared..; Azerbaijani Hijab Ban Controversy 2010):

[2] Շիա մուսուլմանների կրոնական օրացույցում կարևորվող այս ծեսը Հուսեյնի՝ շիայական երրորդ իմամի հիշատակման օրն է, երբ 661 թ. Քերբելայի մոտ սպանվեց շիայական իմամ Հուսեյնն իր ընտանիքի և կողմնակիցների հետ: Ի հիշատակ այդ մարտիրոսության՝ ամեն տարի այդ օրը սկսվում են սգո արարողություններ, որոնք տևում են 10 օր: Հավատացյալները հավաքվում են մզկիթներում, որտեղ ընթերցվում են Հուսեյնի և նրա զինակիցների տանջանքների մասին պատմող պատմություններ: Փողոցներում և հրապարակներում երթեր

արարողությունը, որի ավանդույթները շարունակվում էին նույնիսկ աթեիստական Խորհրդային Միության շրջանում: Եվ կրոնական պահպանողականության արդյունքում է, որ Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները մեծ հեղինակություն չունեին Նարդարանում, իսկ ադրբեջանական իշխանություններն ավանը դիտարկում էին որպես «օտար երկրամաս», որը պետք է նվաճվի սեփական իշխանությունների կողմից (Examining the Source of Discontent in Nardaran 2015):

Օգտագործելով տեղեկատվական քարոզչության ընձեռած լայն հնարավորությունները՝ ադրբեջանական իշխանությունները կեղծ տեղեկատվական հոսքերի կիրառմամբ և տվյալների աղավաղմամբ սեփական հասարակության ներսում և միջազգային հանրության շրջանում հակաշիայական տրամադրություններ էին բորբոքում: Բաքվի աշխարհիկ իշխանությունները, ցանկանալով ազատվել իրանական կրոնական ազդեցության ցանկացած երևույթից և իրենց հակաշիայական քարոզչության ծիրում գերխնդիր ունենալով շիա քարոզիչների չեզոքացումը, վերջիններիս մեղադրում էին այնպիսի ծանր հանցանքների մեջ, ինչպիսիք են դավաճանությունը, լրտեսությունը, սահմանադրական կարգի տապալումը, ռազմական հեղաշրջման փորձի իրականացումը, անօրինական զենք պահելը և այլն:

Ուշագրավ է, որ ադրբեջանական հակաշիայական քարոզչամեքենան, ուղղված լինելով արտաքին լսարանին, Իրանին «պիտակավորելու» միջոցով ջանում էր Ադրբեջանին ներկայացնել «զոհի կարգավիճակում» (Ismailov 188): Ադրբեջանական քաղաքական վերնախավը, ամեն կերպ փորձելով հանդես գալ որպես Արևմուտքի դաշնակից, «հակաահաբեկչական» գործողություններով փորձում էր «համոզել» միջազգային հանրությանը, մասնավորապես՝ Արևմուտքին, որ «Իրանը ձգտում էր խռովություններ հրահրել Ադրբեջանում» (Ismailov 188):

Ուստի՝ պատահական չէ, որ սոցիալ-տնտեսական խնդիրներով պայմանավորված՝ նարդարանյան առաջին ցույցերը կազմակերպվել են 2002 թ. հունիսին՝ (Azerbaijan: release and allegations of torture of Nardaran detainees; Souleimanov 2015,) Ադրբեջանի կրոնական քաղաքականության մեջ ջրբաժանի դեր խաղացող 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից (Չոբանյան 76; September 11 attacks United States 2001) մի քանի ամիս անց, ինչից հետո Ադրբեջանի կառավարությունը, միջազգային հանրության համաձայնությամբ և աջակցությամբ, ձեռք բերեց ազատ գործելու լայն հնարավորություններ:

Եվ Նարդարանում ադրբեջանական իշխանությունների կողմից պարբերաբար կրկնվող հակաշիայական գործողությունների նոր ալիք սկսվեց 2015 թ.՝ շիա գործիչների նկատմամբ զանգվածային բռնաճնշումների իրականացմամբ (Халилова 2015; "Azerbaijan Deepens Crackdown On Shi'ite Stronghold" 2015), որն ունի առանցքային նշանակություն՝ համարվելով Բաքու-Թեհրան տեղեկատվական-հոգեբանական պատերազմի գագաթնակետերից մեկը (**برای اولین بار تجمع عاشورایی در آذربایجان برگزار نشد 2017**):

են տեղի ունենում, որոնց մասնակիցները դաշույններով և շղթաներով հարվածում են իրենց, որպեսզի զգան այն ցավը, որ զգացել են մարտիրոսները: Այս միստերիան ոչ միայն ողբի արտահայտման արարողություն է, այլ նաև ներողամտության հայցում է, քանի որ իմամ Հուսեյնին խոստացված օգնությունը չցուցաբերվեց Քուֆայի շիաների կողմից: Կանայք այդ օրը նույնպես սգում են, և նրանց թափած արցունքները հավաքվում են հատուկ սրվակների մեջ, քանի որ համարվում է, որ այդ օրվա արցունքները բուժիչ հատկություններ ունեն: Տե՛ս Հայաստանը և տարածաշրջանը, https://bitly.ws/34zpG, էջ 59:

Նարդարանյան իրադարձությունները

Ադրբեջանական աշխարհիկ հասարակության հետ որևէ առնչություն չունեցող և «իրանական ազդեցության օջախ» (Antelava 2005; Azerbaijan Deepens Crackdown On Shi'ite Stronghold) համարվող Նարդարանի բնակիչները, որոնք բարձրագույն կրոնական իշխանություն (մարջա-է թաղլիդ) են համարում Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին, մշտապես աչքի են ընկել իրենց կրոնական պահպանողականությամբ: Սակայն Բաքվի աշխարհիկ վարչակարգի հակաշիայական ռազմավարությունը հանգեցրեց միջազգային իսլամական ծայրահեղականության դեմ պայքարի պատրվակով Նարդարան ավանում պարբերաբար կրկնվող խաղաղ ցույցերի դաժանորեն ճնշմանը: Այս իրողության վառ ապացույցն են Նարդարան ավանում ձևավորված «Մուսուլմանական միություն» կուսակցության առաջնորդ Թալեհ Բաղիրզադեի[1] և իր համախոհների նկատմամբ իրականացվող քաղաքական բռնաճնշումները և Բաքվի աշխարհիկ իշխանությունների՝ նրանց՝ իբրև թշնամական կերպար ներկայացնելու փորձերը: Այս իրողությունը հատկապես ակներև է դառնում 2014 թ. Ադրբեջան ժամանած պահպանողական և հակահիսրայելական հայացքներով հայտնի այաթոլլահ Նուրի Համեդանի ձեռքը համբուրելու դեպքով, որով Բաղիրզադեն ի ցույց էր դնում իր նվիրվածությունը շիայականությանը (New round of Shia crackdown in Azerbaijan 2015; Посольство Ирана о событиях в Нардаране 2015; **سرکوب خشونت‌آمیز شیعیان در مهم‌ترین مرکز شیعی آذربایجان2015**):

Եթե ադրբեջանական կողմը տեղեկատվական դաշտում կիրառում էր ցանկացած միջոց շիա հալածյալ գործչին հակահերոս և ահաբեկիչ ներկայացնելու համար, ապա Իրանը, ընդգծելով շիայական իսլամում առանցքային նշանակություն ունեցող նահատակության գաղափարը, համեմատականներ է անցկացնում 2015 թ. Սաուդյան Արաբիայում շիա հայտնի քարոզիչ այաթոլլահ Նիմր ալ-Նիմրի մահապատժի և նարդարանյան դեպքերի միջև՝ Բաղիրզադեին հռչակելով «Ադրբեջանի շեյխ Նիմր» (Valiyev 72; 2016 **بازداشت رئیس شورای ریش سفیدان نارداران باکو**):

Այսպես, 2015 թ. նոյեմբերին ադրբեջանական իշխանությունները, նպատակ ունենալով վերջնականապես ջախջախելու «ոչ բռնի, պահպանողական» (Amnesty international public statement 1) «Մուսուլմանական միություն» շիայական շարժումը, ձերբակալելու նրա առաջնորդ Թալեհ Բաղերզադեին և վերջինիս շիա համախոհներին, «պատժիչ գործողություն» իրականցրին Նարդարանի «Իմամ Հուսեյնի» մզկիթի Աշուրայի սգածեսի մասնակիցների նկատմամբ՝ հեռացնելով շիայական բոլոր խորհրդանիշները (կարգախոսներ, դրոշներ), իսկ ոստիկանության և անվտանգության ուժերի կողմից բռնության ենթարկվեցին հարյուրավոր շիա կրոնավորներ, շուրջ 16 հավատացյալներ էլ, այդ թվում՝ Թալեհ Բաղիրզադեն, ձերբակալվեցին (Azerbaijan: torture and travesty of justice in Nardaran case 2017):

Հարկ է նշել, որ բողոքները չեն սահմանափակվում Նարդարանով. բախումների հաջորդ թիրախը Գանջան էր (Գանձակ) (Վարդանյան և ուրիշներ 201), որտեղ հակաշիայական քաղաքականությամբ հայտնի նահանգապետ Անար Վալիյեվին 2018 թ. չապացուցված հրազենային վիրավորում հասցնելը պատճառ դարձավ, որ

[1] Թ. Բաղիրզադեն աչքի է ընկնում հակակառավարական հայտարարություններով և հանդես է գալիս աշխարհիկ Ադրբեջանում շիայական արժեքների պահպանման մոտեցումներով:

Բաքվի վարչակարգը մեղադրանքների սլաքը հերթական անգամ ուղղի «Մուսուլմանական միության» դեմ (**ناآرامی های گنجه 2019**): Գանջայի նահանգապետի սպանության առթիվ Իրանի անվան շահարկումից հետո ԻԻՀ արտաքին գործերի նախարարության խոսնակ Բահրամ Ղասեմին, դատապարտելով ադրբեջանական իշխանությունների սադրիչ հայտարարությունները, շեշտում է Իրանի դեմ տարվող քարոզչական գործողությունները. «Իրանի դեմ հաշվարկված և ճշգրիտ հոգեբանական պատերազմ է ակտիվացել որոշակի կենտրոնների կողմից, որոնք հիմնականում զբաղվում են լուրեր կեղծելու և Իրանին մեղադրելու գործով, ինչը պահանջում է բոլորի զգոնությունը» (**ناآرامی های گنجه 2019**):

Փաստորեն, Բաքվի աշխարհիկ իշխանությունների կողմից Նարդարանում իրականացրած «բեմադրությունը», որի իրական նպատակը շիաների կրոնական զգացողությունները լռեցնելն ու Իրանի կրոնական ազդեցությունից խուսափելն էր, հնարավորություն տվեց նախագահ Իլհամ Ալիևին «կրոնի քողի ներքո ահաբեկչական զինված հանցավոր խմբի վնասազերծման» պատրվակով ձեռնամուխ լինելու շիա առաջնորդների ձերբակալությանը և դատավարությանը, ինչն աչքի էր ընկնում մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներով (Нардаран 2017); (Ismailov 189):

Բաքվի աշխարհիկ իշխանությունները ոչ միայն չէին բավարարվում «Մուսուլմանների միասնության շարժման» անդամների ձերբակալություններով, այլև սպառնալիքների և քրեական հետապնդումների միջոցով թիրախավորում էին նարդարանյան դեպքերին առնչվող վկաներին: Բացի այդ, ադրբեջանական իշխանությունները, գիտակցելով տեղեկատվական պատերազմում մեդիայի թողած ահռելի ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման վրա, փորձեցին կանխել շարժման գաղափարների հետագա տարածումը՝ ձերբակալելով սոցիալական ցանցերում ակտիվություն դրսևորող ընդդիմադիրներին, ինչպես Ֆուաադ Ղարիամանլիին, որը կոչ էր անում շարունակելու բողոքի ակցիաները և աջակցելու Թալեհ Բաղիրզադեին (Ismailov 189):

Իրանական արձագանքները

Շիա բռնաճնշվածներին օգնելու գաղափարախոսական ռազմավարությունը համարվում է ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության ուղենիշը, որի միջոցով ձևավորվում են Իրանի արձագանքներն արտաքին աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ (Գևորգյան 155): Եվ այս հանգամանքը հաշվի առնելով՝ նարդարանյան դեպքերի մասին իրանական արձագանքները հատուկ կարևորություն են ձեռք բերում:

Նարդարանում շիաների դեմ Ադրբեջանի իշխանությունների կատարած հարձակումն Իրանի համար լինելով կարմիր գիծ՝ անմիջապես հայտնվեց Իրանի կրոնաքաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում: Նույնիսկ Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների ձգտող Հասան Ռոհանիի կառավարությունը (2013-2021 թթ.) ստիպված եղավ տեղի տալ հոգևորականների ճնշումներին և արձագանքել նարդարանյան դեպքերին:

Սակայն ուշագրավ է, որ Նարդարանի շիա բնակչությանն օգնելու և շիայական սրբավայրերը պաշպանելու վերաբերյալ իրանական ղեկավարության և դիվանագետների վարած քաղաքականությունը չափազանց զգուշավոր էր: Այս համատեքստում հարկ է նշել, որ Իրանի ղեկավարությունը, կարևորելով շիայական կրոնական տոների անցկացման և սրբավայրերի պահպանման անհրաժեշտությունը,

միաժամանակ շեշտում էր այն հանգամանքը, որ Իրանը երբեք այլ երկրների նկատմամբ բռնի քաղաքականություն չի ցուցաբերել և չի փորձել պարտադրել իր կրոնական համոզմունքներն ու քաղաքական հայացքները:

Այսպես, Ադրբեջանում Իրանի դեսպանատունը իր հայտարարության մեջ նշում է, որ Իրանն Ադրբեջանի ներքին գործերին խառնվելու նպատակ երբեք չի հետապնդել և Նարդարանի իրադարձություններում որևէ դերակատարում չի ունեցել: Իրանը մշտապես ցանկացել է կայունություն և խաղաղություն բարեկամ երկրներում ու սկզբունքորեն դեմ է խնդիրների՝ բռնի ուժով կարգավորմանը (Посольство Ирана о событиях в Нардаране – ЗАЯВЛЕНИЕ 2015; Վարդանյան և ուրիշներ 2016): Իրանական կողմը նաև պատրաստակամություն է հայտնում մասնակցելու հետաքննությանը, եթե Ադրբեջանի իշխանություններն ապացույցներ ներկայացնեն այս իրադարձություններում Իրանի մասնակցության վերաբերյալ (Iran’s embassy stresses non-involvement in Nardaran events 2015):

Իրանը, հայտարարության շարունակության մեջ շեշտելով Ադրբեջանի հետ կառուցողական և բարիդրացիական հարաբերություններն ու անդրադառնալով արտաքին ուժերի կողմից երկու երկրների հարաբերություններին միջամտելու խնդրին, հայտարարում է. «Ադրբեջանում որոշ ուժեր և հատկապես վահաբականները[1] փորձում են օգտագործել Նարդարանի իրադարձությունները և շիայականությունը ներկայացնել որպես կրոնական ահաբեկչություն» (Посольство Ирана о событиях в Нардаране 2015): Ինչպես նաև ընգծվում է, որ այս ուժերը պատմության ընթացքում օգտագործել են տարբեր իրադարձություններ երկու երկրների միջև անջրպետ ստեղծելու համար: Ակնհայտ է, որ վերջին հարձակումները նպատակ ունեն Իրանին վարկաբեկելու և երկու երկրների հարաբերությունները սրելու (Iran’s embassy stresses non-involvement in Nardaran events 2015):

Իր հերթին Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին Նարդարանում տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանելիս փորձում է չեզոքություն պահպանել և նշում. «Այն, ինչ տեղի է ունենում Ադրբեջանի ներսում, Ադբեջանի ներքին խնդիրն է» (Лариджани: События в Нардаране-внутреннее дело Азербайджана 2015): Իսկ Իրանի խորհրդարանի (Մեջլիսի) ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Մանսուր Հաղիղաթփուրը, Նարդարանի շիաների նկատմամբ կիրառված բռնությունը հեղափոխական շարժում բնութագրելով, տեղի բնակչությանը կոչ է անում արթնանալու և առկա խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու (Iranian MP criticizes Baku because of Nardaran 2015): Վերջինս, Ադրբեջանի իշխանություններին նախազգուշացնելով դասեր քաղել տարածաշրջանի բռնապետերի ճակատագրից, հայտարարեց. «Ադրբեջանն ազատություն տալով համասեռամոլներին՝ ճնշումների է ենթարկում շիաներին, ինչը կբերի «արատավոր երևույթների» (Souleimanov 2015):

Վերոնշյալ դեպքերի վերաբերյալ մեղմ տեսակետ արտահայտում նաև Իրանի ԱԳՆ մամուլի քարտուղար Ջաբարի Անսարին, որը երկու երկրների

[1]Վահաբականություն եզրույթն առաջացել է սուննիական հանաֆիական կրոնահիրավական ուղղության հիմքի վրա ստեղծված և տեղայնացված, այսինքն՝ կոնկրետ պայմաններին և քաղաքակրթական ու մշակութային առանձնահատկություններին հարմարեցված հոսանքի հիմնադիր Մուհամմադ իբն Աբդ ալՎահհաբի (1703-1791) անունից: Այս կրոնական և քաղաքական գործիչը 18-րդ դարի սկզբին Արաբական թերակղզու Նաջդ շրջանում նախաձեռնեց իսլամի, իր տեսանկյունից, մաքրմանը և վերակենդանացմանը նվիրված կրոնական շարժում: Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան և ուրիշներ; Փաշայան 2007:

հարաբերությունների վատթարացումից խուսափելու կոչով է հանդես գալիս. «Երկկողմ խորհրդակցությունների արդյունքում նախատեսվում է ավելի բարենպաստ մթնոլորտ ստեղծել Ադրբեջանում կրոնական տոների և կրոնական վայրերի սրբության պահպանման համար» (МИД Ирана показал, кто стоит за событиями в Нардаране, 2015; Վարդանյան Ժ. և ուրիշներ, «Նարդարան. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը մեկ տարի անց», 2016):

Իրանի խորհրդարանի (Մեջլիսի) մի շարք պատգամավորներ ևս նամակներ են հղում երկրի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆին՝ կոչ անելով Իրանում Ադրբեջանի դեսպանից բացատրություն պահանջել Նարդարանի դեպքերի վերաբերյալ (Тегеран отслеживает ситуацию вокруг Нардарана 2015): Բավականին կոշտ էր Իրանի Մեջլիսի պատգամավոր Իբրահիմ Նեքուի բողոքի նոտան, որը պաշտոնական Բաքվից պահանջում է անհապաղ դադարեցնել «բռնաճնշումները» և պատասխանատվության ենթարկել դրանց իրականացման մեղավորներին (Евстратов 2015):

Եթե Ռոհանիի իշխանությունը ձեռնպահ էր մնում Ադրբեջանի հարցում խիստ դիրքորոշում հայտնելուց, ապա միանգամայն կոշտ մոտեցում ցուցաբերեցին հոգևոր դասի ներկայացուցիչները՝ շեշտելով շիաներին աջակցելու կարևորության մասին և Իրանի քաղաքական վերնախավից պահանջելով վերանայել Իրան-Ադրբեջան հարաբերությունները:

Ուշագրավ է այն օրինակը, որ շիաների շրջանում մեծ հեղինակություն վայելող Արևելյան Ատրպատական նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին, դատապարտելով ադրբեջանական իշխանություններին, նշում է. «Իրանը ոչ մի մասնակցություն չի ունեցել այս իրադարձություններին: Եթե Ադրբեջանը վերջ չդնի իր ճնշումներին, ապա Իրանը ստիպված կլինի վերանայել իր հարաբերություններն Ադրբեջանի հետ» (Евстратов 2015; Վարդանյան Ժ. և ուրիշներ, «Նարդարան. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը մեկ տարի անց», 2016):

Վերոնշյալ դեպքերին այսօրինակ սուր արձագանք է տվել նաև Ասթարա քաղաքում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Քազեմ Հաֆեզ Նիան՝ ընդգծելով, որ Ադրբեջանում շիա հավատացյալների անվտանգությունն ապահովված չէ, և Բաքվի իշխանությունները պետք է պատասխանատվություն կրեն նրանց հանդեպ ոստիկանների կիրառած բռնությունների համար (Евстратов 2015; Վարդանյան Ժ. և ուրիշներ, «Նարդարան. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը մեկ տարի անց», 2016):

Նարդարանյան դժբախտ դեպքերից հետո մի շարք հոգևորականներ, ինչպիսիք են այաթոլլահ Ջաֆար Սոբհանին և այաթոլլահ Մաքարեմ Շիրազին, դիմելով Ադրբեջանի նախագահին և պետական այրերին՝ հորդորեցին հարգել սեփական երկրի ժողովրդի կրոնական իրավունքները (**آیت الله مکارم شیرازي:دولتمردان 2016**) և միջոցներ ձեռնարկել, որպեսզի նմանատիպ դժբախտ իրավիճակ չկրկնվի (**آیت‌الله «نامه سبحانی» به رئیس‌جمهور آذربایجان2016, با عوامل جنایت علیه مردم درمنطقه ناردارن برخورد کنید2016**) :

Պետք է փաստել, որ Ադրբեջանի հակաշիայական քաղաքականությունը Իրանի թյուրքախոսների շրջանում ևս տարակուսանքի և վրդովմունքի պատճառ էր դարձել, ինչը փաստվում է Իրանի Արդաբիլ նահանգում երկրի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, այաթոլլահ Սեյյեդ Հասան Ամելիի հայտարարությամբ, որտեղ նշվում

է. «Ադրբեջանից մեզ դիմած հավատացյալները, ինչպես նաև Իրանի թյուրքախոսները ստեղծված իրավիճակի կապակցությամբ խիստ մտահոգված են» (Иранский эксперт о событиях в Нардаране 2015; Վարդանյան Ժ. և ուրիշներ, «Նարդարան. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը մեկ տարի անց», 2016):

Հարկ է նկատել, որ Նարդարանում տեղի ունեցող դեպքերին արձագանքելիս շիա հոգևորականները ջանում էին ընդգծել Իսրայելի կողմից հովանավորվող և, առհասարակ, հակաշիայական ուժերի դեմ հաղթական պայքարի համար Իրանի աջակցության կարևորության և բոլոր շիաների համախմբման ու միասնության անհրաժեշտության մասին:

Շեշտելով Իրանի դերն Ադրբեջանի շիաներին աջակցելու և նրանց կրոնական խորհրդատվություն ցուցաբերելու կարևորությունը՝ Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի Սարաբ քաղաքի ուրբաթօրյա աղոթքի հոգևոր առաջնորդ (իմամ ջումա) Ալի Աքբար Աքրամին, ինչպես նաև Հոջաթ օլ-Էսլամ Մահմուդ Թաղիզադե Դավարին անդրադառնում են Նարդարան ավանում մի խումբ շիաների նահատակությանը և փաստում, որ տեղի ունեցածը այդ երկրի շիաների նկատմամբ իրականացված բռնաճնշումների միայն մի մասն է (**حمایت از شیعیان آذربایجان نباید فراموش شود 2016**), և նախազգուշացնելով «Ադրբեջանի բռնապետական պաշտոնյաներին»՝ հայտարարում, որ եթե աշխարհի ցանկացած կետում շիաների նկատմամբ բռնություն գործադրվի, Իրանը կշարունակի օգնել և աջակցել նրանց» (Представитель духовенства Ирана сделал предупреждение «диктаторским чиновникам Азербайджана» в связи с событиями в Нардаране 2015), (**امام جمعه ارومیه: شهادت شیخنمر2016**):

Ադրբեջանում իրանական ներկայության չեզոքացմանն է միտված Իսրայել-Ադրբեջան տանդեմի ձևավորումը, որը փաստվում է «Հուսեյնականներ» շիայական խմբավորման ղեկավար հոջաթ օլ-Էսլամ շեյխ Թոհիդ Իբրահիմ Բեյլիի հակաիսրայելական հռետորաբանությամբ: Վերջինս նշում է, որ ադրբեջանական իշխանությունները Իսրայելի հետ կրոնական քաղաքը զբոսաշրջային քաղաքի վերափոխելու մարտավարությամբ են առաջնորդվում և իրենց օրակարգի գլխավոր հարցն են դարձրել Նարդարանից շիայական խորհրդանիշները հանելը(**نارداران در آسیای میانه و قفقاز، نماد مقاومت بود 2018**):

Նարդարանի՝ շիայական կենտրոն լինելու կարևորությունը ընդգծում է նաև Իրանի Հոսեյնաբադ քաղաքի սունի իմամ Աբդոլսալեմ Մոհամմադին և նշում. «Նարդարանի նահատակները, իրենց համառությամբ հավատարիմ մնալով կրոնական ուսումունքներին, դարձել են շիայական արժեքների պահպանման մարմնացում» (**امام جمعه اهل سنت شهر حسین آباد 2020**):

Ուշագրավ է Հոջաթ-օլ Էսլամ Ռահմանիի այն որակումը, որ աշխարհի ամենաճնշված շիաները Ադրբեջանում են, հատկապես՝ Նարդարանում: Նարդարանյան իրադարձություններում ևս նա, տեսնելով Իսրայելի գործուն մասնակցությունը, հայտարարում է. «Նարդարանի բնակչության խորը պատկերացումները իսլամական շարժման և հեղափոխության վերաբերյալ ստիպել են Իսրայելին ադրբեջանական իշխանությունների հետ ճնշումների ենթարկելով շիաներին՝ փոխել այս ազգի ինքնությունը, որը թշնամանքի բացառիկ օրինակ է» (**بصیرت مردم نارداران جمهوری آذربایجان 2020**):

Դեպքերին անդրադարձել են ոչ միայն դիվանագիտական և հոգևոր դասի բարձրաստիճան ներկայացուցիչներ, այլ նաև ՁԼՄ-ներ, հասարակական,

մշակութային տարբեր ոլորտի գործիչներ, որոնք ևս, համեմատելով Ալիևին տարածաշրջանի բռնապետերի հետ, պահանջեցին դատապարտել Նարդարանյան իրադարձությունների կազմակերպիչներին:

Դեռևս 2011 թ. «Ադրբեջանի Իսլամական կուսակցության» նախագահ Մովսում Սամեդովը, պատմության մեջ առաջին անգամ հրապարակավ դատապարտելով ոչ միայն Իլհամ Ալիևի հակաշիայական գործողությունները, այլև «կոռումպացված» և «անարդար» գործելաոճը՝ կոչ արեց շիաներին ոտքի կանգնել և վերջ տալ բռնակալ վարչակազմին: Ադրբեջանում հակաշիայական քաղաքականության մասին խոսելիս նա զուգահեռներ է անցկացնում Իլհամ Ալիևի դերակատարման և շիաների շրջանում բացասական համարվող Իբն Յազիդի[1] կերպարի միջև՝ նշելով. «Ինչպես Յազիդը (և իր հայրը), Իլհամ Ալիևը Ադրբեջանում ստեղծում է անձի պաշտամունք իր հոր՝ Հեյդար Ալիևի շուրջ» (Azerbaijan: Arrest of Islamic Party Leader Puts Religion in the Political Spotlight 2011): Նմանատիպ զուգահեռներ է անցկացնում Թ. Բաղիրզադեն՝ Ալիևի միանձնյա կառավարումը համեմատելով Եգիպտոսի փարավոնների հետ, Նարդարանի շիաներից պահանջեց դուրս գալ փողոց՝ ընդդեմ իշխող վերնախավի (Мусульмане Азербайджана выступают против ареста теолога 2013):

Արդեն նարդարանյան դեպքերից հետո Թավրիզի գրողները Ալիևների կառավարումը համեմատեցին Լենինի և Ստալինի խորհրդային աթեիստական ժամանակաշրջանի հետ և պահանջեցին վերջ տալ «անմեղ» բանտարկյալների նկատմամբ ճնշումներին ու ազատել նրանց բանտարկությունից (**دولت باکو آزادی آزادی یهودیان را بیشتر و زندان‌ها را از شیعیان**):

Իսկ Ադրբեջանում պետական հեռուստատեսությամբ հեռարձակվող («Սեդա-օ սիմա») հաղորդման նախկին ներկայացուցիչ Բարհան Հեշմատին զուգահեռներ է անցկացնում Բաքվի հակաշիայական գործողությունների և «Իսլամական Պետության» գործելաոճի միջև՝ փաստելով, որ «այդ երկրում (Ադրբեջանում) իշխանությունը շարժվում է ժողովրդի կամքին հակառակ» (**افشای جزئیات روابط آذربایجانو اسرائیل علیه ایران 2020**):

Իրանական լրատվական դաշտում ևս, փաստելով Ալիևների վարչակարգի՝ ամենատարբեր խողովակներով շիայականության դիրքերը թուլացնելու փորձերի մասին, շեշտվում է մշակութային և կրթական հարթակներում համատեղ կրթական ճամբարներ կազմակերպելու իրողությունը: Համանման գործելաոճ տեսնում ենք նաև դիվանագիտական հարթակում, երբ Ալիևը ցուցադրաբար այցելում է Նարդարան և դիմելով Նարդարանի բնակիչներին՝ պահանջում է լինել «հայրենասեր» և հավատարիմ Ադրբեջանի «պետականության» սկզբունքներին (**برای اولین بار تجمع عاشورایی درآذربایجان برگزار نشد**2017) :

Իսկ «Անկախ ուսանողների իսլամական կազմակերպությունների միության» միջազգային մասնաճյուղի ղեկավար Մոին Ռազիին, ընդգծելով շիաներին աջակցելու կարևորությունը, նշում է. «Այժմ մենք պետք է քաջատեղյակ լինենք մահմեդական այլ երկրներում մեր քույրերի և եղբայրների իրավիճակի մասին ու նրանց հետ

[1] Յազիդ իբն Մուավիան՝ 7-րդ դարի արաբական խալիֆայության առաջնորդներից էր (680–683 թթ.), ով, պատասխանատու է Քարբալայի կոտորածի Մուհամմադ մարգարեի թոռ՝ Հուսեյնի սպանության համար:

համագործակցելով՝ ուժեղացնենք դիմադրության ճակատը» (2020 **دبیر واحد بین الملل اتحادیه انجمن‌های اسلامی دانشجویان مستقل**):

Փորձագիտական դաշտի ներկայացուցիչներից Կովկասի հարցերով իրանցի փորձագետ Մեհդի Նալբանդին ևս ընդգծում է. «Այդ միջադեպի հիմնական մեղավորը Ադրբեջանն է: Հավատացյալների վրա նման հարձակում կարելի է սպասել ահաբեկչական խմբավորումներից, բայց ոչ կառավարությունից» (Иранский эксперт о событиях в Нардаране 2015):

Գիտակրթական հաստատությունների արձագանքը ևս բուռն էր. Ադրբեջանի հյուպատոսարանի մոտ անցկացրած բողոքի ցույցի ժամանակ Թավրիզի համալսարանականները կատարվածը բնութագրում են որպես դավադրություն և դատապարտում արտաքին ուժերին՝ Մերձավոր Արևելքում լարվածություն հրահրելու, մուսուլմաններին պառակտելու համար (Tabrizi citizens protest against killing of Shias in Azerbaijan 2015):

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Չնայած Բաքվի իշխանություններն ընդգծում են իրենց վարչակարգի՝ կրոնական հանդուրժողականության և բազմամշակութային քաղաքական մոդել լինելու հանգամանքը, սակայն կրոնական շրջանակների նկատմամբ ճնշումները վկայում են հակառակի մասին: Այս երկրի իշխանական համակարգը ջանք չի խնայում պահպանելու իր աշխարհիկ բնույթը, միաժամանակ կրոնական անհանդուրժողականություն դրսևորելով երկրի շիա բնակչության նկատմամբ:

2. Ադրբեջանի հարևանությամբ գտնվելը և համաշխարհային շիայական կենտրոն լինելն Իրանի համար այն հիմնական գործոններն են, որոնք պայմանավորում են Բաքվի վարչակազմի կրոնական քաղաքականությունը և հավատացյալների հանդեպ հալածանքները Նարդարանում:

3. Ադրբեջանական իշխանությունները, ճնշելով Նարդարանի շիա բնակչությանը, լուծում էին նաև արտաքին քաղաքական հարց՝ միջազգային հանրությանը ցույց տալով ԱՀ ավտորիտար պետության արդարացված լինելը, քանզի պետության մեջ խիստ կրոնական հայացքներ ունեցող հատվածը ցանկանում է երկրում հաստատել արմատական իսլամական կարգեր:

4. Ի տարբերություն իրանական քաղաքական ղեկավարության վարած զգուշավոր գործելաոճի, որը պայմանավորված էր Իրան-Ադրբեջան հարաբերություններում նոր լարվածություն չստեղծելու հանգամանքով՝ Իրանի հոգևորականությունն ու փորձագիտական դաշտը իր արձագանքներում առավել կոշտ էր և բնորոշումներում՝ առավել թիրախային՝ ընդհուպ պատմական բացասական կերպարներին համեմատելով Ալիևի և նրա վարչակարգի հետ (իբն-Յազիդ, Ստալին, ԴԱԻՇ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան. Աննա, «Իրանի արձագանքը «Իսլամական պետություն» կազմակերպության գործողություններին», *Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն,* Վերլուծական տեղեկագիր, N.7, 150-172:

2. Հովհաննիսյան. Դավիթ, Հովհաննիսյան. Միքայել, «Վահաբականության կերպափոխումները Սաուդյան Արաբիայի նոր քաղաքականության համատեքստում», *Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն*, Վերլուծական տեղեկագիր, N.13,7-24:

3. Չոբանյան. Գայանե, «Իսլամի քաղաքական դերը Հետխորհրդային Ադրբեջանում».«*21-րդ ԴԱՐ*», թիվ 2 (48), 2013թ.:

4. Վարդանյան. Ժաննա և ուրիշներ, «Նարդարան. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը մեկ տարի անց», *Ռազմինֆո,* 25.11.2016, https://razm.info/92210. Հասանելիություն՝ 07.12.2023:

5. Փաշայան. Արաքս, «Վահաբական գործոնն Ադրբեջանում», *Նորավանք*, 2007, https://bitly.ws/36AUy. Հասանելիություն՝ 07.12.2023:

6. Евстратов, Антон. «Шииты против Азербайджана». *NG.Ru*, 16.12.2015, https://bitly.ws/34GUx. Доступно: 01.05.2019.

7. «Иранский эксперт о событиях в Нардаране: Если ситуация с шиитами в Азербайджане ухудшится, Иран должен будет оказать им поддержку». *Panorama.am*, 30.11.2015. https://bitly.ws/352Pm. Доступно: 11.12.2023.

8. «Кто был шейх Нимр аль-Нимр?». *Голос Америки*, 02.01.2016. https://bitly.ws/34zw3 Доступно: 05.12.2023.

9. «Лариджани: События в Нардаране—внутреннее дело Азербайджана», *EADaily*, 01.12.2015, https://bitly.ws/34GLe. Доступно: 07.12.2023.

10. «МИД Ирана показал, кто стоит за событиями в Нардаране», *Haqqin.az*, 14.12.2015, https://haqqin.az/news/59125. Доступно: 29.11.2023.

11. «Мусульмане Азербайджана выступают против ареста теологаhttps», *Institute for war and peace reporting*. 09.04.2013, https://bitly.ws/35MSs. Доступно: 29.11.2023:

12. Нардаран. *Кавказский Узел,* 21.07.2017, https://www.kavkaz-uzel.eu/articles/291187/. Доступно: 18.11.2023.

13. «Представитель духовенства Ирана сделал предупреждение «диктаторским чиновникам Азербайджана» в связи с событиями в Нардаране», *Panorama.am* 07.12.2015, https://bitly.ws/35wGu. (Доступно: 01.12.2023)

14. «Посольство Ирана о событиях в Нардаране – ЗАЯВЛЕНИЕ», *Oxu.az*, 01.12.2015, https://ru.oxu.az/politics/104790. Доступно: 07.12.2023.

15. «Посольство Ирана о событиях в Нардаране», *Новости Армении - NEWS.am*, https://news.am/rus/news/299379.html, 01.12.2015 Доступно: 07.12.2023.

16. Посольство Ирана о событиях в Нардаране, https://turan.az/ru/politika/posolstvo-irana-o-sobytiiax-v-nardarane *TuranAz*, 01.12.2015, Доступно: 05.12.2023.

17. «Тегеран отслеживает ситуацию вокруг Нардарана». *Голос Армении*, 14.12.2015, https://bitly.ws/34GRb, (Доступно: 29.11.2023):

18. Халилова, Кёнуль. «Почему власти Азербайджана борются с религиозной деревней» *BBC.NEWS(Russian),* 27.09.2015, https://bitly.ws/34VsE. Доступно:05.12.2023.

19. "Azerbaijan: Torture and Travesty of Justice in Nardaran Case". *Amnesty international public statement*, 2017, https://bitly.ws/34DKE, Available:03.11.2023 .

20. "Antelava, Natalia, "Azeri Poverty Fuels Rise of Islam". *BBCNews*. 06.11.2005, http://news.bbc.co.uk/2/hi/europe/4411524.stm, Available: 05.12.2023.

21. "Azerbaijan: Arrest of Islamic Party Leader Puts Religion in the Political Spotlight". 01.11.2011. *Eurasianet*. https://bitly.ws/34NHV, Available: 01.12.2023.

22. "Azerbaijan Deepens Crackdown On Shi'ite Stronghold". *Radio free EuropeRadio Liberty.* 01.12.2015, https://www.rferl.org/a/azerbaijan-nardaran-raid/27400436.html. Available: 12.12.2023.

23. Azerbaijani Hijab Ban Controversy, *Institute for War and Peace Reporting*, 17.12.2010, https://iwpr.net/global-voices/azerbaijani-hijab-ban-controversy, Available: 11.12.2023.

24. "Azerbaijan: Release and Allegations of Torture of Nardaran Detainees". World Organisation against Torture. 09.10.2002. https://bitly.ws/34VoZ, Available: 11.12.2023.

25. Azerbaijani Government Accused Iran of Trying to Infiltrate the Country's Mosques, Resulting in Removal of 118 Clerics from their Jobs .*MeydanTv*. 06.04.2023, https://bitly.ws/36A3o, Available: 11.12.2023.

26. "Tabrizi Citizens Protest against Killing of Shias in Azerbaijan", *Mehr News Agency*, 11.12.2015, https://bitly.ws/34RgX, Available: 11.12.2023.

27. "Examining the Source of Discontent in Nardaran". *MeydanTv,* 13.12.2015, https://bitly.ws/36mDb, Available: 11.12.2023.

28. "Iranian MP Criticizes Baku because of Nardaran". *The news agency Turan*. 01.12.2015, https://bitly.ws/352GE . Available: 07.12.2023.

29. "Iran's Embassy Stresses Non-involvement in Nardaran Events", *Trend News Agency*, 01.12.2015, https://en.trend.az/azerbaijan/society/2463501.html, Available:07.12.2023.

30. In his interview with modern.az, National Assembly deputy Yevda Abramov declared that several Azerbaijani media outlets including websites are being financed by Iran, *Meydan.TV,* 29.10 2021. https://bitly.ws/36A3H . Available: 07.12.2023.

31. "Islam does not Have a Significant Influence on Society in Azerbaijan. What does this Mean?" Study. *Jam.news*, 30.01.2023, https://jam-news.net/influence-of-islam-azerbaijan/, Available: 07.12.2023.

32. Ismailov ,Mourad. "Islamic Radicalism that Never was: Islamic Discourse as an Extension of the Elite's Quest for Legitimation: Azerbaijan in Focus", J*ournal of Eurasia Studies*, Volume 10, Issue 2, 2019, p. 188. DOI10.1177/1879366519863167. Available 11.12.2023.

33. "Nardaran case". *European Human Rights Advocacy centre*, https://bitly.ws/34zIB, Available: 05.12.2023.

34. "New Round of Shia Crackdown in Azerbaijan", *Taghrib.news*, 28.11.2015 https://bitly.ws/35MKg Available:13.12.2023

35. Souleimanov, Emil. "Azerbaijan, Islamism and Unrest in Nardaran". *The Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program Joint Center*, 27.12.2015, https://bitly.ws/34VoJ. Available: 05.12.2023

36. "September 11 Attacks United States", *Britannica,* 2001, 07.12.2023, https://www.britannica.com/event/September-11-attacks. Available: 05.12.2023.

37. Svante,Cornell. *The Politicization of Islam in Azerbaijan.* Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2006

38. Valiyev, Anar. "Iranian Soft Religious Power in Azerbaijan: Old New Threat for Azerbaijan". *Religion and Soft Power in South Caucasus*, Tbilisi, 2017. p.72 DOI:10.4324/9781315206721-5

33.خلجی, مصطفی. «علی» علیه «علی‌اف»؛ چگونه دو کشور شیعی خصم یکدیگر شدند؟08.04.2023 Available: 12.12.2023 Farsi.Alarabiya. https://bitly.ws/34zgm

34. برای اولین بار تجمع عاشورایی در آذربایجان برگزار نشد/ دولت باکو چگونه شیعیان را حذف می‌کند/ شیعیانی که حق عزاداری اباعبدالله(ع) را نداشتند.*Mashregh.news* 2017. https://bitly.ws/34zso Available: 12.12.2023.

35. بازداشت رئیس شورای ریش سفیدان ناردارن باکو.*Fars.news*. 2016. https://bitly.ws/34zGk. Available:12.12.2023

36. سرکوب خشونت‌آمیز شیعیان در مهم‌ترین مرکز شیعی آذربایجان. *Tasnim.news* 03.12.2015. Available: 12.12.2023. https://bit.ly/3q4fPsk

37. آیت الله مکارم شیرازي:دولتمردان آذربایجان حقوق دیني مردم را رعایت کنند .2016.Irna.news Available:03.12.2024. https://bitly.ws/3dKjG

39 ناآرامی های گنجه؛ دخالت خارجی یا نارضایتی داخلی. 2019. https://bitly.ws/34DRo. *Irna.news.* Available:13.12.2023

39. با عوامل جنایت علیه مردم درمنطقه نارداران برخورد کنید .2016. https://bitly.ws/34LTW. *Irna.news.* Available:13.12.2023

40. نامه «آیت‌الله سبحانی» به رئیس‌جمهور آذربایجان. https://bitly.ws/34LWg *Irna.news* 2016. Available:13.12.2023

41. حمایت از شیعیان آذربایجان نباید فراموش شود .*Fars.new* 2016. https://bitly.ws/34M3S. Available:13.12.2023

42. امام جمعه ارومیه: شهادت شیخ نمر نشان از ترس حکومت آل سعود از حقایق اسلام است. *Irna.news* 2016. https://bitly.ws/34MfG Available:13.12.2023.

43. نارداران در آسیای میانه و قفقاز، نماد مقاومت بود/ زنده نگهداشتن مجالس امام حسین(ع) به معنای احیای اسلام حقیقی است.*Fars.news* 2018. https://bitly.ws/34Nk9.Available:13.12.2023

44. امام جمعه اهل سنت شهر حسین آباد: شهدای نارداران مظهر ایستادگی و ارزش های دینی در آذربایجان شدند.*Aran.news* 2020 Available:13.12.2023.https://bitly.ws/35X9g.

45. بصیرت مردم نارداران جمهوری آذربایجان علت فشارهای عوامل رژیم صهیونیستی بر ساکنان این دیار است.*Aran.news* .2020. https://bitly.ws/34Nz8. Available:13.12.2023.

46. دولت باکو آزادی یهودیان را بیشتر و زندان‌ها را از شیعیان پر میکند. *Mehr.news* .2020. https://bitly.ws/34NJw. Available:13.12.2023

47. افشای جزئیات روابط آذربایجان و اسرائیل علیه ایران / نقش «آذربایجان» در ترور شهید علیمحمدی *Mashregh.news*.2020.https://bitly.ws/34R8J. Available:13.12.2023

48. برای اولین بار تجمع عاشورایی در آذربایجان برگزار نشد/ دولت باکو چگونه شیعیان را حذف می‌کند/ شیعیانی که حق عزاداری اباعبدالله(ع) را نداشتند. *Mashregh.news*.2017.https://bitly.ws/34Rcm. Available:13.12.2023

49. دبیر واحد بین الملل اتحادیه انجمن‌های اسلامی دانشجویان مستقل: وقایع نارداران در جمهوری آذربایجان ماهیت ضد صهیونیستی دارد.*SNN* .2020. https://bitly.ws/35XdY. Accessed:13.12.2023

WORK CITED

1. Afšā-ye ǧozīyat-e rawābet-e Āḏarbāīǧān wa Esrāyīl ʻaleyh –e īran, naqš «Āḏarbāīǧān» dar teror-e ʻAlīmohamadī [Exposing the Details of Relations Between Azerbaijan and Israel against Iran/the role of "Azerbaijan" in the Assassination of martyr Alimohammadi]. Mashregh.news, 2020, https://bitly.ws/34R8J, Accessed:13.12.2023 (In Persian)

2. Āyatollah Makārem šīrāzī: doūlatmardān-e Āḏarbāīǧān hoquq-e dīnī-ye mardom rā reʻāyat konand [Ayatollah Makarem Shirazi: The Statesmen of Azerbaijan should Respect the Religious Rights of the People]. Irna.news, 2016, https://bitly.ws/34LZ2. Available:13.12.2023 (In Persian)

3. Ba ʻawāmel-e ǧenāyat-e ʻaleīḥ-e mardom dar manṭaqe-ye Nārādārān barḥord konid [Deal with Perpetrators of Crimes against People in Naradaran Region]. Irna.news, 2016, https://bitly.ws/34LTW. Available:13.12.2023 (In Persian)

4. Baṣirat-e mardom-e Nārdārān-e Ǧomhurī-ye Āḏarbāīǧān ʿelīyat-e fešār hā-ye ʿawāmel-e rezhīm-e ṣehīūnīstī bar sākenān-e īn dīār ast [The Insight of the Nardaran People of the Republic of Azerbaijan is the Reason for the Pressure of the Zionist Regime Agents on the Residents of this Land]. Aran.news, 2020. https://bitly.ws/34Nz8, Available:13.12.2023. (In Persian)

5. Barāye avalīn bār tağamoʿe ʿāšurāyī bargozar našod?/doūlat-e Bāku ĉegune šīʿyān rā haḏf mī konad/ šīaʿyān ke haq-e ʿazādarī ra nadāštand [For the First time, the Ashura Gathering was not Held in Azerbaijan/ How does the Baku Government Eliminate Shiites/ Shiites who did not have the Right to Mourn Abba Abdullah]. Mashregh.news, 2017. https://bitly.ws/34zso, Available: 12.12.2023 (In Persian)

6. Bāzdāšt-e rayīs-e sefidān-e Nārdārān-e Bāku [The Arrest of the Head of the Council of Elders of Nardaran Baku]. Fars.news, 2016, https://bitly.ws/34zGk, Available: 12.12.2023 (In Persian)

7. Chobanyan. Gayane, "Islami qaxaqakan dery' hetxorhrdayin Adrbejanum", "21-rd Dar", tiv 2(480), 2013. [The Political Role of Islam in Post-Soviet Azerbaijan. 21-th Century, N.2 (48), 2013] (In Armenian)

8. Dabir-e wāhed-e beyn olmelal-e etehādīye-ye anğoman hā-ye eslāmi dānešğuyān-e mostaqel: woqāyeʿ Nārdārān dar Ǧomhurī-ye Āḏarbāīǧān māhiyat-e ḏed-e sehīunīstī dārad [Secretary of the International Unit of the Union of Islamic Associations of Independent Students: Naradaran's Events in the Republic of Azerbaijan are Anti-Zionist in Nature]. SNN, 2020, https://bitly.ws/35XdY. Available:13.12.2023 (In Persian)

9. Doūlat-e Bākū āzādī-ye yahūdīān rā bīštar wa zendān hā rā az šīaʿyān por mīkonad [The Government of Baku Increases the Freedom of the Jews and Fills the Prisons with Shiites]. Mehr.news, 2020, https://bitly.ws/34NJw (In Persian)

10. Emām ğomʿe-ye ahl-e sonat šahr-e Hoseyn Ābād: šahadā-ye Nārdārān moẓhar-e īstādegī wa arzeš hā-ye dīnī dar Āḏarbāīǧān šodand [Sunni Imam of Hossein Abad city: Martyrs of Nardaran Became the Epitome of Standing and Religious Values in Azerbaijan]. Aran.news, 2020, https://bitly.ws/35X9g.Available:13.12.2023 (In Persian)

11. Emām ğomʿe-ye Orūmī-ye: šahādat-e šeyḥ Namr nešān az tars-e hokūmat-e Āl-Saūd az haqāyeq-e eslām ast [Imam Juma of Urmia: The Martyrdom of Sheikh Nimr Shows the Fear of the Al Saud Government from the Truths of Islam]. Irna.news, 2016, https://bitly.ws/34MfG. Available:13.12.2023 (In Persian)

12. Evstratov, Anton, Shiity protiv Azerbajdzhana". [Shiites against Azerbaijan] NG.ru, 16.12.2015, https://bitly.ws/34GUx, Dostupno: 01.05.2019. Available: 01.05.2019 (In Russian)

13. Ge'vorgyan, Anna. Irani ard'aganqy' "Islamakan petut'yun" kazmakerput'yun gorc'oghut'yunnerin. Qaghaqakrtakan ev mshakut'ayin hetazotut'yunneri kentron, Verluc'akan teghekagir, 2015, N.7,150-172. [Iran's Response to the Activities of the "Islamic State". Center for civilization and cultural studies, Analytical Bulletin, 2015 N.7, pp. 150-172] (In Armenian)

14. Hemāyat az šīaʿyān–e Āḏarbāīǧān nabāyad farāmuš šawad [The Support of the Shiites of Azerbaijan should not be Forgotten]. Fars.new, 2016, https://bitly.ws/34M3S. Available:13.12.2023 (In Persian)

15. Hovhannisyan, Davit and Hovhannisyan, Miqayel. Vahabakanut'yan kerpap'oxumnery Saudyan Arabiayum nor qaxaqakanut'yan hamateqstum. Qaghaqakrtakan ev mshakut'ayin hetazotut'yunneri kentron, Verluc'akan teghekagir. 2019, N. 13, 8-24. [The Transformations of Wahhabism in the Context of the New Policy of Saudi Arabia. Center for Civilization and Cultural Studies, Analytical Bulletin, 2019, N. 13, 8-24]. (In Armenian)

16. Iranskij jekspert o sobytijax v Nardarane: Esli situacija s shiitami v Azerbajdzane uxudshitsya, Iran dolzhen budet ikazat' im podderzhku [Iranian expert on events in Nardaran: If the situation with Shiites in Azerbaijan worsens, Iran will have to provide them with support]. Panorama.am, 30.11.2015. https://bitly.ws/352Pm. Dostupno: 11.12.2023. Available: 11.12.2023 (In Russian)

17. Kto byl shejx Nimr-al'-Nimr? [Who was Sheikh Nimr al-Nimr?]. Golos Ameriki, 02.01.2016. https://bitly.ws/34zw3, Dostupno: 05.12.2023. Voice of America, 02.01.2016. Available 05.12.2023 (In Russian)

18. Laridzhani: Sobytija v Nardarane; vnutrennee delo Azerbajdzana [Larijani: Events in Nardaran- an Internal Affair of Azerbaijan]. EADaily, 01.12.2015, https://bitly.ws/34GLe Dostupno: 07.12.2023.. Available; 07.12.2023 (In Russian)

19. MID Irana pokazal, kto stoit za sobytijami v Nardarane [The Iranian Foreign Ministry showed who is behind the Events in Nardaran]. Haqqin.az, 14.12.2015, https://haqqin.az/news/59125. Dostupno: 29.11.2023. Available 29.11.2023 (In Russian)

20. Musul'mane Azerbajdzana vystupajut protiv aresta teologa [Azerbaijani Muslims Oppose the Arrest of a Theologian]. Institute for war and peace reporting, 09.04.2013, https://bitly.ws/35MSs. Dostupno: 29.11.2023. Available 29.11.2023 (In Russian)

21. Nārdārān dar Āsīā-ye mīān-e wa Qafqāz, namād-e moqawemat būd, zende negahdāštan-e mağāles-e Emam Hoseyn be maʿnā-ye ehīā-ye eslām-e haqīqī ast [Nardaran was a Symbol of Resistance in Central Asia and the Caucasus/ keeping Imam Hussain's Meetings Alive Means the Revival of True Islam]. Fars.news, 2018, https://bitly.ws/34Nk9. Available:13.12.2023 (In Persian)

22. Nardaran. Kavkazskij Uzel [Nardaran. Caucasian Knot], 21.07.2017, https://www.kavkaz-uzel.eu/articles/291187/. Dostupno: 18.11.2023. Available. 21.07.2017 (In Russian)

23. Nāārāmī hā-ye Ganğe, deḫālat-e ḥāreğī yā nāraḏāytī –ye dāḥeli [Restlessness in Ganja: External Interference or Internal Dissatisfaction]. Irna.news, 2019, https://bitly.ws/34DRo Available: 13.12.2023. (In Persian)

24. Nāme-ye āyatollah Sobhānī be rayīs ğomhur-e Āḏarbāīğān [Ayatollah Sobhani's Letter to the President of Azerbaijan]. Irna.news, 2016, https://bitly.ws/34LWg. Available:13.12.2023 (In Persian)

25. P'ashayan. Araqs,Vahabakan gorc'onn Adrbejanum. Noravanq ["The Wahhabi Factor in Azerbaijan", Noravanq], 2007, https://bitly.ws/36AUy, Hasaneliut'yun՝ 07.12.2023, Available: 07.12.2023]. (In Armenian)

26. Posol'stvo Irana o sobytijax v Nardarane- Zajavlenie [Iranian Embassy on Events in Nardaran – STATEMENT]. Oxu.az, 01.12.2015, https://ru.oxu.az/politics/104790. Dostupno: 07.12.2023. Available: 07.12.2023] (In Russian)

27. Posol'stvo Irana o sobytijax v Nardarane [Iranian Embassy on Events in Nardaran]. https://news.am/rus/news/299379.html. Novosti Armenii- NEWS.am, 01.12.2015, Dostupno: 07.12.2023. Available: 01.12.2023 (In Russian)

28. Posol'stvo Irana o sobytijax v Nardarane [Iranian Embassy on Events in Nardaran]. https://turan.az/ru/politika/posolstvo-irana-o-sobytiiax-v-nardarane, Turan.Az, 01.12.2015, Dostupno: 05.12.2023. Available: 01.12.2023 (In Russian)

29. Predstavitel' duxovenstva Irana sdelal preduprejdenie "diktatorskim chinovnikam Azerbajdzana" v svjazi s sobytijami v Nardarane [A Representative of the Iranian Clergy Issued a Warning to “Dictatorial Officials of Azerbaijan” in Connection with the Events in Nardaran]. Panorama.am, 07.12.2015, https://bitly.ws/35wGu Dostupno: 01.12.2023 Available: 01.12.2023 (In Russian)

30. Tegeran otslezhivaet situaciju vokrug Nardarana ["Tehran is Monitoring the Situation around Nardaran"]. Golos Armenii, 14.12.2015, https://bitly.ws/34GRb. Dostupno: 29.11.2023. Voice of Armenia. Available: 29.11.2023 (In Russian)

31. Vardanyan, Jhanna ev ayl, Nardaran. Adrbejani shianeri ymost avany mek tari anc [Nardaran. Azerbaijan's Rebellious Shiite Village in One Year"]. Razmifo, 25.11.2016, https://razm.info/92210. Hasaneliut'yun` 07.12.2023:, Razmifo, 25.11.2016, https://razm.info/92210 , Available: 07.12.2023 (In Armenian)

32. Xalilova, Kjonul. Pochemu vlasti Azerbajdzana borjutsja s religioznoj derevnej? [Why are the Azerbaijani authorities Fighting a Religious Village?]. BBC.NEWS(Russian), 27.11.20123, https://bitly.ws/34VsE. Доступно:05.12.2023 Available: 27.11.2023 (In Russian)

33. 33.Xaleji, Mostafa. ʻAli ʻaleīḥ-e ʻAliof, čegune do kešvar-e šīʻe xaṣm-e yekdigyar šodand? [Ali" against "Alif"; How Two Shiite Countries Became Enemies of Each Other] 08.11.2023. Farsi.Alarabiya. https://bitly.ws/34zgm. Available 12.12.2023 (In Persian)

IRANIAN REACTIONS TO THE NARDARAN INCIDENTS OF 2015: THE SHI'IT CHARGE AGAINST THE ANTI-SHIA REGIME

SIRANUSH VARDANYAN
Yerevan State University, Faculty Of Oriental Studies,
Chair of Iranian Studies, Lecturer, Ph.D.Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present the Iran-Azerbaijan information-psychological war and the methods used in it, using the Nardaran cases as an example.

The article examines the religio-political situation of Nardaran, which was marked by the persecution of the clergy, the banning of many religious ceremonies, the introduction of Western values (on a European model), various demonstrations, arrests and bloody clashes.The article presents the contrast that Nardaran, despite being so close to Baku, is at the same time the most religious and conservative Shiite center in that country.

Within the framework of this article, we have set the task to highlight the main reactions and views expressed by the Iranian side regarding the events of 2015 on the part of the Azerbaijani authorities with repressions against Shiite population of Nardaran town of Azerbaijan.

The work is written based on various scientific studies and materials taken from the mass media, using analytical, comparative and historiographical methods.

The study concludes that Azerbaijan, perceiving Iranian influence as a threat to its secular nature, is carrying out complex anti-Shia activities, as evidenced by the events in Nardaran. In the context of the issue, the Iranian religio-political leadership adopts a more measured and cautious approach, in contrast to Iran's high-ranking clerics, who hold more rigid positions and employ stricter rhetoric.

Key words: *Nardaran events, Shia, religion, persecution, Iranian influence, protest, demonstrations, propaganda, Iranian reactions*.

РЕАКЦИЯ ИРАНА НА НАРДАРАНСКИЕ СОБЫТИЯ 2015 ГОДА. ШИИТСКАЯ ЗАЩИТА ПРОТИВ АНТИШИИТСКОГО РЕЖИМА

СИРАНУШ ВАРДАНЯН
преподаватель кафедры иранистики факультета востоковедения Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Цель статьи – на примере событий в Нардаране представить ирано-азербайджанскую информационно-психологическую войну и использованные в ней методы.

В статье рассматривается религиозно-политическая ситуация в Нардаране, которая отличалась гонениями на духовенство, запретом многих религиозных церемоний, внедрением западных ценностей (по европейскому образцу), различными демонстрациями, арестами и кровопролитными столкновениями. В статье представлен контраст, заключающийся в том, что Нардаран, несмотря на близость к Баку, в то же время является самым религиозным и консервативным шиитским центром Азербайджана.

Мы поставили задачу в рамках данной статьи осветить основную реакцию и отклики, высказанные иранской стороной относительно событий 2015 года, когда власти Азербайджана устроили репрессии против шиитского населения города Нардаран.

Работа написана на основе различных научных исследований и материалов, взятых из СМИ, с использованием аналитических, сравнительных и историографических методов.

В результате исследования мы пришли к выводу о том, что Азербайджан, рассматривая иранское влияние как угрозу своему светскому общественному и государственному строю, осуществляет многоплановую антишиитскую деятельность, примером которой являются события в Нардаране. В контексте проблемы иранское религиозно-политическое руководство реагирует мягче и осторожнее, в отличие от высокопоставленных священнослужителей Ирана, которые более жестки в своих позициях и строги в своей риторике.

Ключевые слова: *Нардаранские события, шииты, религия, преследования, иранское влияние, протест, демонстрации, пропаганда, реакция Ирана.*